ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«07» ապրիլի 2020 թվականի N 109

## ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԿՐԿՆԱԿԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի օրինակելի աշխատակարգի 8.4-րդ կետի՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի (ծածկագիր 2.1-5), աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր 2.3-18), աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ-հաշվապահի (ծածկագիր 2.3-15) և աշխատակազմի գլխավոր մասնագետի (ծածկագիր 2.3-8) համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար 2020 թվականի ապրիլի 8-ին անցկացվող կրկնակի մրցույթների՝ համակարգչի միջոցով ձևավորված մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Մրցութային հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով լիազորված անձ նշանակել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Թումանյանին:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. ապրիլի 7
ք. Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
2020 թվականի ապրիլի 7-ի թիվ 109 որոշման

# ԿԱԶՄ
# ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| հ/հ | անունը, ազգանունը | հաստատությունը (մարմինը) | պաշտոնը |
|---|---|---|---|
| 1 | Արմեն Ադամյան | Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմ | համայնքի ղեկավարի խորհրդական (տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու) |
| 2 | Հենրիկ Միրզոյան | Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմ | ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետ |
| 3 | Նունիկ Ասրյան | ՀՀ Լոռու մարզպետարան | ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ |
| 4 | Դավիթ Ստեփանյան | ՀՀ Լոռու մարզպետարան | հողաշինության և հողօգտագործման բաժնի ավագ մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար |
| 5 | Համլետ Պողոսյան | Տեղական ինքնակառավարման մարմին | Սպիտակ համայնքի ավագանու անդամ |
| 6 | Նարինե Մաթոսյան | «Սպիտակի Դ. Տեր-Սիմոնյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | Ուսուցիչ |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ԳՅՈՒԼԱԶՅԱՆ

*07/04/2020 11:06:52 A*
*Առաջատար պաշտոններ 31.03.2020թ. (ծածկագիր՝ խմբ-2_200408_1100)*

# Հանձնաժողովի կազմը

ԱՐՄԵՆ ՅՈՒՐԻԿԻ ԱԴԱՄՅԱՆ
*Հաստատություն՝* Համայնքապետարան
*Պաշտոն՝* ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ (ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ)

ՀԵՆՐԻԿ ՌՈՒԲԵՆԻ ՄԻՐԶՈՅԱՆ
*Հաստատություն՝* Համայնքապետարան
*Պաշտոն՝* ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ՆՈՒՆԻԿ ԺՈՐԱՅԻ ԱՄՐՅԱՆ
*Հաստատություն՝* Մարզպետարան
*Պաշտոն՝* ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ
*Այլ տվյալներ՝* ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ԴԱՍԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

ԴԱՎԻԹ ՍՏԵՓԱՆՅԱՆ
*Հաստատություն՝* Մարզպետարան
*Պաշտոն՝* ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՀԱՄԼԵՏ ՄՈՒԽԱԵԼԻ ՊՈՂՈՍՅԱՆ
*Հաստատություն՝* Ավագանի
*Պաշտոն՝* ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՆԱՐԻՆԵ ՍՊԱՐՏԱԿԻ ՄԱԹՈՍՅԱՆ
*Հաստատություն՝* Գիտական հաստատություններ
*Պաշտոն՝* «ՍՊԻՏԱԿԻ Դ. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ, ՈՒՍՈՒՑԻՉ
*Այլ տվյալներ՝* ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՕՏԱՐ ԼԵԶՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«07» ապրիլի 2020թ. № 110

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 407 ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի ղեկավարի 2019 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 407 որոշմամբ գանձման ենթակա գումարներից Արկադի Մկրտիչի Բոյախչյանը կատարել է մասնակի վճարումներ և դիմել է մնացած գումարի վճարումը հետաձգելու խնդրանքով, հիմք ընդունելով Արկադի Մկրտիչի Բոյախչյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2019 թվականի հոկտեմբերի 30-ի «Արկադի Մկրտիչի Բոյախչյանին գույքահարկի գումարի գանձման պահանջ ներկայացնելու մասին» թիվ 407 որոշման կատարումը հետաձգել մինչև 2020 թվականի ապրիլի 30-ը ներառյալ:

2. Մինչև սույն որոշման 1-ին կետում նշված ժամկետի ավարտը Սպիտակ համայնքի ղեկավարի 2019 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 407 որոշումը չկատարելու դեպքում այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արկադի Բոյախչյանին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում իրազեկելուն հաջորդող օրվանից:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020 ապրիլի 7
ք. Սպիտակ